



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




Վ. ԻԿՈՆՈՍՏՈՍՈՎ

ՅԵՎ


Մ. ՄՅԱՍՆԻԿՈՎ

== ՀԵՏԵՎԱԿԻ ==
ՄԱՐՏԱԿԱՐԳԵՐԸ

1930





356



A 4172
~~16222~~

ՀԵՏԵՎԱԿԻ
ՄԱՐՏԱԿԱՐԳԵՐԸ





ՀԵՅՈՒՆԻՍՏՆ

Գրանեղ. 3094 (բ) Պատկեր 1184 Տիրութ 3000

«Էնեմիտի մարտաեզրեք» գրքուչում
հասկացալուծելուն և տրվում ժամանակա-
կից մարտում հեռակալի ունեցած նշանա-
կութեան մասին, հեռակալի մարտական աշ-
խատանքի մասին և հեռակալի մարտակար-
գերի մասին՝ հարձակողական և պաշտպա-
նողական մարտում:

Գրքուչը նկարագարուիւմ և:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԷ՛

	62
Հետևակի նշանակութիւնը ժամանակակից մարտում	3
Հետևակի մարտական աշխատանքները	8
Հետևակի մարտակարգերը պաշտպանվող հակառակորդի վրա հարձակվելիս	26
Հետևակի մարտակարգերը պաշտպանութիւն ժամանակ	30

ՀԵՏԵՎԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱ-
ԿԻՑ ՄԱՐՏՈՒՄ

Չնայած ներկայիս ռազմական տեխնիկայի հզորագույն զարգացմանը, մարտի յեւթը կախված է հետևակի հաղթանակից կամ պարտությունից, վորովհետև վո՛չ տանկերը, վո՛չ հրետանին, վո՛չ ավիացիան և վոչ ել հզոր տեխնիկական միջոցները չեն կարող իրենք իրենց վորոշել մարտի բախտը: Դրանք բոլորը միմիայն ոգնում են հետևակին հաղթություն ձեռք բերելու և ամրապնդելու ձեռք բերածը: Հետևակը ինչպես յեղել և, այնպես ել մնում է իրրև հիմնական և ամենաբազմամարդ զորքի տեսակը: Նրա թվական մեծությունից, պատրաստականությունից և մարտական հզորությունից ել կախված է ամբողջ բանակի մարտական զորությունը, ապա ուրեմն նաև՝ յերկրի մարտական զորությունը:

Հետևակի զործողությունների հաջողությունից կախված է նաև մարտի հաջողությունը:

Մոտախորապես այդպես է ասում հետևակի վերաբերյալ հետևակի մեր մարտական կառոնադիրքը:

Ոտարեբերյա բանակաների բողոք կանոնա-
գրքերը, ճիշտ այնպես, ինչպես մերը, հետևա-
կը համարում են զորքի հիմնական տեսակ, վո-
րի համար զորքերի մյուս տեսակները (տան-
կերը, ավիացիան, հրետանին և այլն) հան-
դիսանում են իբրև ոգնականներ:

Ինչո՞ւ յե հետևակը համարվում զորքի
հիմնական տեսակ:

Ահա թե ինչու:

1. Միմիայն հետևակը կարող է շարժվել
և գործել ամեն տեսակի տեղանքում և ամեն
ժամանակ:

Հետևակը վոչ մի խոչընդոտ չի ճանաչում,
գեշերն ել կռիվ ե վարում այնպես, ինչպես
ցերեկը, թե լամ և թե վատ յեղանակին և ամեն
տեսակի տեղանքում:

2. Միմիայն հետևակն է ընդունակ ինք-
նուրույն կերպով համառ և տևական մարտ
մղելու՝ նույնիսկ առանց այլ տեսակի զորքե-
րի ոգնության:

3. Միմիայն հետևակը կարող է ամենից
լավ հարմարվել տեղանքին և իրենից աննկա-
տելի նշան ներկայացնել:

4. Միմիայն հետևակը մարտում մեծ կո-
րուսաներ ունենալով, չի կորցնում իր ընդու-
նակությունը մարտը շարունակելու:

Ահա այդ հատկություններն են, վոր հե-
տևակին դարձնում են զորքի ամենահզոր տե-
սակը: Վոչ մի այլ տեսակի զորք չի կարող

լիակատար կերպով կատարել այն, ինչ վոր հե-
տևակն ե անում: Որքնակ՝ հրետանին շատ գո-
րավոր ե, ամեն մի խոչընդոտ կարող ե խոր-
տակել, սակայն ե այնպես չի կարող ինքնու-
րույն կերպով գրավել ե պահել նույնիսկ ա-
մենափոքր գյուղը, ե պետք ե դիմի հետևակի
դորությանը, վորովհետև ինքը, հրետանին ի-
րեն պաշտպանել չի կարող: Կամ թե տանկերը:
Տանկը կարող ե ե՛կրակել ե շարժվել ամեն
տեղ ու իր ծանրությամբ ճգմել, սակայն, ո-
րինակ, հակառակորդի գինյվորներին գերի բռո-
նել կամ գրաված տեղանքը պահել չի կարող:
Հետևակը միմիայն հակառակորդի հետե-
վակի դեմ չե, վոր կռվում ե:

Նա սպառազինված ե սովորեցրած ե այն-
պես, վոր կարող ե հաջողությամբ կռվել թե
հեծելագորի, թե՛ սավառնակների (դնդացրա-
յին կրակով), թե տանկերի (դրահահար գըն-
դակներ, նռնակներ) ե թե՛ դազերի (հակա-
դադ) դեմ:

Մարտում չի կարելի հակառակորդին մի-
միայն հրաձգությամբ ջախջախել: Հրաձգու-
թյունը միմիայն ճանապարհ ե հարթում սվի-
նին, վորը ե վերաջացնում ե մարտը: Հետևա-
կի մարտում ունեցած ներկայիս խնդիրը հան-
գում ե նրան, վորպեսզի կրակի ոգնությամբ
կարելի լինի կուրծքը կրծքին թշնամու դեմ
դուրս դալ ե վճռական ձեռնամարտով փշրել
նրա դիմադրությունը ե վոչնչացնել նրա գին-

վորներին: Մեր հետևակն այնպես է կազմված,
վոր կարող է ուժեղ կրակ բանալ և ուժեղ կրակ
վարել և ծիածամանակ իր կազմում ունի մար-
տիկներ, վորոնք կապված չեն գնդացիներին
և մշտապես պատրաստ են սվինով հարվածե-
լու:

5. Մեր հետևակն իր կազմում ունի՝ գըն-
դացրային ջոկեր, վորոնց խնդիրն է կրակով
կորուցտներ պատճառել հակառակորդին և նը-
րան քայքայել և հրաձգային ջոկեր, վորոնք
վերջնականապես հակառակորդին վոչնչացնում
են:

Ի հարկե, մոտիկ տարածության վրա և
գնդացիներ չլինելու դեպքում հրաձգային ջո-
կերը նույնպես կարող են ոգտադործվել կրա-
կով հակառակորդին յետ շարտելու համար,
սակայն նրանց գլխավոր և հիմնական խնդիրն
է հարվածել նոնակով ու սվինով:

ՀԵՏԵՎԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մարտում հետևակը միշտ պետք է գործի
արագ, վճռական կերպով և հանկարծակի:
Յեթե մենք դանդաղ գործենք և անվճռական,
հակառակորդը կպատրաստվի մեզ դեմ հան-
գիման գալ և կարող է պատահել, վոր վոչ
թե մենք կարողանանք նրան հարվածել, այլ
նա մեզ:

Հակառակորդին ջախջախելու համար հե-

տեակը պետք է սկզբում նրան կրակով կորուստներ պատճառի և մոտենալով նրան, նրա գինվորներին վոչնչացնի ձեռնամարտում: Այսպիսով յուրաքանչյուր մարտ բաղկացած է՝ կրակով հակառակորդին հարվածելուց և նրան մոտենալուց՝ ձեռնամարտի համար:

Հակառակորդը տեսնելով մեր մոտենալը, անմիջապես մեզ վրա կրակ է բաց անում, աշխատելով մեզ կորուստներ պատճառել և թույլ չտալ իրեն մոտենալու: Ուստի, հակառակորդին առանց կորստի (կամ փոքր կորուստներով) մոտենալու համար, մենք նույնպես պետք է հրաձգություն սկսենք և այնպես կրակենք, վոր ստիպենք հակառակորդին ծածկվել թաքստոցների յետևը և հնարավորություն չտանք նրան բարձրացնել իր դլուխը և մեզ վրա կրակել:

Մեր հրետանու, զնդացիներին և հրացանների լավ հրաձգությունը կվոչնչացնի հակառակորդի կրակային ուժը և կստիպի նրա զնդացիներին լռել: Դիպուկ կրակը հնարավորություն կտա մեր հետևակին արագ կերպով մոտենալ հակառակորդին այնպիսի հեռավորության վրա, վորտեղից կարելի կլինի նրա վրա հարձակվել սվիններով: Մակայն հրաձգությունը պետք է կատարել մեծապես հաշիվ կատարելով: Հակառակորդի վրա պետք է կրակ բանալ այնպես, վոր մեր մի քանի զնդացիներն իրենց զնդակները միանգամից թա-

փեն հակառակորդի՝ մեզ ամենից շատ խան-
դարող գնդացրի վրա և ընդհատեն այն սպա-
սարկումը, վոր կատարվում և գնդացրի նը-
կատմամբ, կամ թե հակառակ դեպքում ստի-
պեն նրան թաքնվել և դադարեցնել իր հրաձը-
գությունը: Այդպիսի հրաձգությամբ մեր
հետևակը կարող և առանց մեծ կորուստների
քիփ մոտենալ հակառակորդին: Առանձնապես
ձեռնտու յե կրակել գնդացիրների, հրամա-
նատարների և դիտակետերի վրա: Այդ հրա-
ձգությունը, յեթե նա դիպուկ հրաձգություն
ե, կստիպի հակառակորդին դադարեցնել իր
կրակը, կամ կդարձնի այդ կրակը վոչ դիպուկ
և անկանոն:

Մեր հետևակի հրաձգությունը պետք և
պատրաստել այնպես, վոր հակառակորդին
հետզհետե մոտենալիս աստիճանաբար ուժե-
ղանա, հասնելով գրոհի ժամանակ ամենամեծ
զորության: Հրաձգությունը կատարվում և
այսպես. մեծ հեռավորությունից սկսվում և
հրետանային կրակը, այնուհետև 1000 մետ-
րից (1500 քայլից) կրակ են բաց անում գըն-
դացիրները, 800 մետրից՝ (1200 քայլից) —
ձեռքի գնդացիրները, իսկ 400 մետրից՝ (600
քայլից) — հրացանները: Այդպիսի հրաձգու-
թյամբ մենք վորքան շատ ենք մոտենում հա-
կառակորդին, այնքան մեր կրակն ավելի յե
ուժեղանում: Ամենաուժեղ կրակը տեղի յե ու-
նենում այն ժամանակ, յերբ մենք քիփ մոտե-

Յու՛մ ենք հակառակորդին, այսինքն սվինա-
մարտի սկզբին:

Հակառակորդին պետք և մոտենալ (մո-
տիկ գնալ) ծածուկ ճանապարհներով—ձորե-
րով, պուրակներով կամ անտառներով, բլուր-
ների հետևով, դիշերը, մառախուղին, վատ
յեղանակներին, վորպեսզի հակառակորդը չկա-
րողանա մեզ տեսնել և մեզ կորուստներ պատ-
ճառել:

Յեթե դեպի հակառակորդը տանող ծա-
ծուկ ճանապարհներ չկան, հակառակորդը մեզ
նկատի և մեզ վրա կրակ բանա, պետք և զորա-
սյունից ցրվել և շարժվել դեպի հակառակորդը
մասնատված շարքով: Այդպիսի շարքով խիստ
կերպով պակասում են կորուստները, քանի
վոր արկն այդպիսի դասավորման մեջ ընկնե-
լով շարքից դուրս և քցում մեկ կամ յերկու
մարդու, մինչդեռ զորասյան մեջ ընկնելով,
այնտեղ մեծ կորուստներ և պատճառում:

Պիտի շարժվել արագ կերպով, առանց
կանգ առնելու, վորպեսզի կարելի լինի շու-
տով և հետևապես, փոքրաթիվ կորուստներով
դուրս գալ այնպիսի տեղ, վորտեղից կարելի
լինի միանգամից հարձակվել հակառակորդի
վրա:

Այդպիսի մասնատումը շատ ուղուստներ և
ուսնենում, սակայն չպետք է մոռանալ, վոր
վաղաժամ մասնատումը դանդաղեցնում և դե-
կավորումը, ուստի այդ մասնատմանը պետք


ե անցնել իր ժամանակին, յերբ այդ իրոք անհրատեչտ ե:

Հակառակորդին ջախջախելու համար չի սլահանջվում լինել ամեն տեղ ուժեղ: Պետք է ուժեղ լինել միմիայն մի տեղում և այդտեղ ուղարկել իր գլխավոր ուժերը, իսկ մյուս տեղերում կարելի յե լինել թույլ: Իր գլխավոր հարվածը պետք է ուղղել հակառակորդի ամենաթույլ տեղերը, վորպեսզի կարելի լինի մեկ հարվածով նրան ջախջախել և վոչնչացնել:

Մարդու վրա հարձակվելու դեպքում նրան հարվածելու ամենավտանգավոր և թույլ տեղը հետևից է կամ կողքից: Ճիշտ այդպեօ էլ մարտում: Հակառակորդի համար ամենավտանգավոր և թույլ տեղը նրա թիկունքն ու թևերն են: Ահա թե ինչու միշտ պետք է ձգտել հակառակորդին հարվածել թիկունքից և թևերից: Հարվածելով հակառակորդի այդ տեղերին, մենք հնարավորություն չենք տալիս նրան յետ նահանջել և մեր հարվածներից աչք բաց անել, այլ յենթարկում ենք նրան վոչնչացման: Մանավանդ այդ ձեռնտու յե այն ժամանակ, յերբ մենք նրան հարվածում ենք միաժամանակ թև՝ ճակատից, թե՛ թիկունքից և թե՛ թևերից: Կրթակի հետ միացած այդպիսի շարժումը կոչվում է զորաշարժ (մանեվր):

Ջորաշարժերը լինում են զանազան տեսա-

կի՛ շրջանցում, շրջափակում և հակառակորդի
ճակատի ճեղքում:




Գծանկ. 1. Հոկոսակորդի շրջանցման մի սրինակ գումարտա-
կի մեջըցով

Շրջանցում կոչվում է հակառակորդի թեևում
կամ թիկունքում կատարվող այն գործողու-
թյունը, յերբ շրջանց կատարող հետևակը
գործում է առանց կրակային կապի, այսինքն
ճակատում կոչվող հետևակից անկախ (նկ. 1):

Շրջափակում կոչվում է հակառակորդի
թեևում կատարվող գործողությունը, յերբ
շրջափակող հետևակը գործում է ճակատում
կոչվող հետևակի հետ միասին:


Ճեղքում կոչվում է հետևակի՝ հակառա-
կորդի ճակատի ներքո թափանցելը և ճեղքի

Հորթի վառաջացած թևերի դեմ կատարվող գործողությունները (նկար 3):



Գծանկ. 2 Նահատում գործող գործաժաներից մեկի յըջափակման մի որինակ

Ինչպես մենք արդեն ասացինք, հակառակորդին վերջնականապես շախշախելու համար պետք է նրան վորքան կարելի յե շատ կորուստներ պատճառել, մոտենալ նրան և ձեռնամարտով նրան վոջնչացնել:



Գծանկ. 3. Տեղեւան մի որինակ

Մակայն հակառակորդին պետք է կարողանալ մոտենալ վարպետորեն: Չպետք է մոտենալ հակառակորդին և կռվել ամբողջամարի կամ թե իր ուժերը բաշխել ճակատի վրա համահավասար կերպով: Մեր հետեւակային կանոնադիրքն ասում է, վոր «հրազենի ժամանակակից զարգացումով անթույլատրելի յե դեպի աննպատակ և բավականաչափ կորուստներ տանող հետեակի կուտակումը փոքր տարածությունների վրա»:

Հետեակը պետք է կռվի մեջ մտնի, մարտում շարժվի և տեղում դասավորվի խորությամբ և ճակատով մասնատված կարգերով:

1914—1918 թվերի սլատերագմի ժամանակ մենք և մեր հակառակորդները կռվի դուրս յեկանք միմիայն շղթայով կռվելու սովորեցրած զորքերով: Շղթա յե կոչվում այնպիսի շարվածքը մարտում, յերբ հրաձիգները տեղանքում միևնույն դժում իրար կողքի յեն պանվում:

Մարտի այդպիսի շարվածքով հետեակը մեծ կորուստներ եր ունենում, իսկ հակառակորդը շատ հեշտությամբ եր հարվածում շղթաները գնդացրային և հրետանային կրակով: Հետեակ մարտիկները, վորոնք խաղաղ ժամանակ սովորել եյին գործել միմյանցից մոտիկ հեռավորության վրա, արմուճկն ընկերոջ արմուճկին կպած, շփոթվում եյին, չը-

դիտեցին ինչ անեն, քանի վոր ստիպված էին
մարտում կռվել ինքնուրույն կերպով և մի-
մյանցից հեռու տարածութեան վրա:


Հետևակի ստորաբաժանումներին շեյին
սովորեցրել գործելու առանձին-առանձին և
ինքնուրույն կերպով, այդ պատճառով եւ,
յերբ մեծ կորուստներ եյին կրում, շղթաները
կանգ եյին առնում և վորպեսզի կարելի լիներ
հարձակումն առաջ տանել, պետք և մարտի մեջ
նոր շղթաներ մտցնեյին: Այդ պատճառով եւ
հետևակը վեր եյին ածում մի քանի կարգ
շղթաների և ալիքանման մղում եյին հակա-
ռակորդի դեմ: Յերբ հակառակորդը ցրիվ եր
տալիս առաջին շղթան, նրա տեղ թիկունքից
շարժվում եր յերկրորդ շղթան, յերրորդը և
այլն այնքան, մինչև վոր վորևե շղթա (Յ-րդը
կամ 4-րդը) վերջի վերջո հասներ հակառա-
կորդին և վոչնչացներ նրան սվինի հարվա-
ծով:

Այդպիսի շարվածքով կրակել կարող եր
միմիայն առաջին շղթան, իսկ մյուս շղթա-
ներն ակամայից լռում եյին, քանի վոր վախե-
նում եյին յուրայիներին խփելուց:

Հետևակի շարժումն այդպիսի շղթաներով
հեռվից նկատվում եր, քանի վոր դժվար եր
շղթաների համար տեղանքում կողմորոշվելը,
և նրանք մեծ կորուստներ եյին կրում հակա-
ռակորդի կրակից: Համաշխարհային պատե-
րազմի վերջին դադարեցին շղթաներով գոր-

ծելուց: Բոլորն ել հասկացան, վոր լավ հրա-
 ձգության, հակառակորդին հարվածելու և
 դադտագողի շարժվելու համար իսկի յեւ հար-
 կավոր չե մարտիկներին անպայման կողք-
 կողքի շարել (չղթաներով): Կարելի յե լավ
 կրակել և ծածուկ շարժվել ցրիվ դալով ճա-
 կատի վրա և խորությամբ՝ նայած տեղան-
 քին—մեկը առջևից, մյուսը յետևից, յերրոր-
 ւը աջից և ալիս, միայն թե չխանգարել յետե-
 վիններին հակառակորդի վրա կրակելու:

Կողմ A 9173



Գծանկ. 4. Ոճաշար

Սկսեցին ցրիվ մարտակարգով դործել բա-
 լոր հետևակային մասերը (հրաձիգներ, ջոկ,
 դասակ, վաշտ, գումարտակ) — վերոնք առջև-

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
 ԳՐԱԳԱՐԱՆ Խ 2
 ԱԳՉԴԵՅՐԻԱ

վից, փորոնք յեակից, մյուսները աջից և աջին :
Մարտի համար այդպիսի շարվածքը մեր կա-
նոնագրքով կոչվում է մասնատված շարվածք :

Ծածուկ մատույցներով դեպի հակառա-
կորդը շարժվելու ջոկի ամենալավ մարտա-
կարգը հանդիսանում է ունաշարը (դժանկ. 4) :
Սակայն այդ կարգն անհրաժեշտ է կրակ վա-
րելու համար, դրա համար ել գործադրվում է
հակառակորդին մոտենալու ժամանակ :

Բաց տեղանքով հարձակում գործելու հա-
մար, յերբ ջոկը հակառակորդի հետ կրակա-
յին մարտի մեջ է մտել, գործադրվում է շղթա
կամ յերամաշար (դժանկ. 5 և 6) :



Դժանկ. 5. Շղթա

Տեղանքից և հակառակորդի կրակից կախ-
ված ջոկի կարգերը կարող են փոխանցվել մի-
մյանց մեջ : 7-րդ դժանկարում ցույց է տրված,
թե ինչպես է մասնատվում դասակի մարտա-
կարգը :

Ներկայիս ընդունված մարտակարգը շատ
ավելի լավ է առաջվա շղթաներից, սակայն
միաժամանակ մեծ պահանջներ ունի թե հրա-

մանատարներից և թե շարքային մարտիկներից:

Մարտակարգի շարժումն այնպես միակերպ չի լինելու, ինչպես առաջ, յերբ շարժ-




Գծանկ. 6. Շղթա

վում ելին շղթաններով: Այժմ մարտում կլինեն ջրկեր, վորոնք կկարողանան արագ կերպով առաջ շարժվել, մյուսներն ել հակառակորդի կրակով կանդ կառնեն: Ջրկերը կաշխատեն ամբողջ դաշտում ցրիվ յեկած, կատարելապես ինքնուրույն կերպով, հիշելով մի բան միայն, վոր պետք և հասնել հակառակորդին և վոչնչացնել նրան սվինով ու ճեռքի նրոնակներով:

Ամբողջ մարտը ներկայումս տեղի յե ունենում կրակային միջոցների և հրաձիգների փոխադարձ գործողությամբ. թնդանութներն ու դնդացիրներն իրենց կրակով հրաձիգների

Համար ճանապարհ են հարթուած նրանց քա-
տիպում են հակառակորդին կաշել դեանին և
կրակից պաշտպանվելու ծածկարան գտնել:



Գծանկ. 7. Մարտակարգի փոփոխութիւնը հարձակման ժամանակ
կախված տեղանքից և հակառակորդի կրակից

Վորքան ավելի դիպուկ և ուժեղ ե մեր
պնդացիւրների կրակը, այնքան ավելի դժվար
ե հակառակորդի համար կրակ վարել մեր հրա-
ձիգների և գնդացիւրների վրա: Մեր կրակա-
յին միջոցների խնդիրն ե՝ պաշտպանել մեր
հրաձիգները առաջ շարժումը, հնարավորու-
թիւն տալ նրանց առաջ շարժվել մեկ ծածկա-
րանից մյուսը, վորտեղից ավելի հարմար կլի-
նի կրակ վարել, այսինքն ճնշել հակառակորդի
կրակը: Իրենց կրակով հրաձիգների առաջ
շարժումը պաշտպանող կրակային միջոցները
միշտ միևնույն տեղում չեն մնում, նրանք

նույնպէս առաջ են շարժվում մեկ տեղից մյուսը, վորպեսզի նոր տեղից կարողանան կործանիչ կրակ բանալ հակառակորդի վրա: Այդ առաջ շարժումները կատարվում են աստիճանաբար, վամանք կրակ են տեղում, մյուսներն այդ ժամանակ պաշտպանութեան ներքո վազում են նոր տեղեր և անմիջապէս բաց են անում իրենց կրակը, դրանով հնարավորութեամբ տալով յետևում յեղածներին առաջ շարժվելու: Առաջ շարժվելը պետք է կատարել այնպէս, վոր չխանդարեն այն կրակային միջոցներին կրակ վարելու, վորոնք տեղավորված են յետևում:

Շարժման այդպիսի կարգը պահանջում է բոլոր հրամանատարներից և մարտիկներից, հասկանալ և լավ գիտենալ վոչ միայն իր ստորաբաժանումի, այլև ամբողջ զորամասի խնդիրները: Այդ կապահովի փոխադարձ ոգնութեամբ և փոխադարձ պաշտպանութեամբ ցույց տալ բոլորին, սկսած շարքայիններից և ավելի բարձր:

Ժամանակակից մարտակարգն ընդարձակված է, հրաձիգները ցրվել են յեկած առանձին խմբերով: Ղեկավարել դրանց դժվար է, այդ պատճառով էլ մարտում յուրաքանչյուր հրամանատարից և մարտիկից պահանջվում է մեծ ինքնուրույնութեամբ և վարպետութեամբ կատարել դրված խնդիրն առանց պետի ցուցման: Ներկայումս առանց հրամանատարի հրամաններ

բին սպասելու, պետք է հաճախակի ինքք վարողի, թե ինչ է հարկավոր անել: Ժամանակակից մարտում հաջողություններ ձեռք բերելու համար պահանջվում է բոլոր մարտիկներից ամբողջովին լարել իրենց ուժերը, ունենալ համարձակություն, համառություն և տոկոսնություն:

Հնարավոր չէ ամեն տեղ հակառակորդից ավելի ուժեղ լինել: Այդ բանին հասնելը դժվար է և այդ չի յել պահանջվում: Պետք է ուժգին կերպով հարվածել հակառակորդի միայն մեկ տեղին, վորտեղից նա թույլ է: Ուստի խոշոր զորամասերը (գումարտակ, վաշտ) յուրաքանչյուր մարտում պետք է դասավորեն իրենց ուժերն այնպես, վոր վորեւ տեղում լինեն հակառակորդից մի քանի անգամ ավելի ուժեղ, իսկ մեկ ուրիշ տեղում կարելի չէ նրանից ավելի թույլ ել լինել: Այդ դեպքում կանգ առնել տալով հակառակորդին այնտեղ, վորտեղ մենք ավելի թույլ ենք, կջախջախենք նրան այնտեղ, վորտեղ մենք նրանից ավելի ուժեղ ենք: Հարձակման ժամանակ մեր ուժերի այն մասը, վորով մենք պետք է կանգ առնել տանք հակառակորդին, մեր կանոնադրքերով կոչվում է կաշկանդիչ խումբ: Այդպես է կոչվում նա այն պատճառով, վոր իր համարձակ գործողություններով նրա ուշադրությունը գրավում է և հնարավորություն չի տալիս իր ոժտնդակներն այլ տեղ

փոխադրելու, մի տեսակ կաշկանդելով հակա-
ռակորդին:

Կաշկանդիչ խումբը պետք է գործի հա-
մարձակ և վճռական կերպով, այլապես նա չի
կարող կաշկանդել հակառակորդին:

Մեր ուժերի այն մասը, վորով մենք հաս-
ցնում ենք հակառակորդին մեր գլխավոր հար-
վածք, կոչվում է հարվածային խումբ: Այդ-
պես է նա կոչվում այն պատճառով, վոր նրա-
նով մենք հարվածում ենք հակառակորդին՝
նրա ամենաթույլ և վտանգավոր տեղին, այ-
սինքն նրան ենք հասցնում մեր գլխավոր հար-
վածք: Հարվածող խումբը պետք է կաշկան-
դիչ խմբից մոտավորապես յերկու անգամ ա-
վելի լինի:

Պատերազմում կարող են այնպիսի դեպ-
քեր լինել, վոր մեր ուժերը չբավականացնեն
հարձակվելու համար և մեզ անհրաժեշտ լինի
պաշտպանել տեղանքը մինչև մեզ ոգնողների
մոտենալը: Այդպիսի դեպքերում մենք պաշտ-
պանվում ենք:

Պաշտպանության ժամանակ հետևակի
խնդիրն է ջախջախել իր ճակատի առջևում յե-
ղած հակառակորդին, իսկ այն դեպքում, յերբ
նա ներխուժի մեր տեղը, ջախջախել նրան մեր
պաշտպանության շրջանի ներսում: Հակա-
ռակորդին վոչ միայն մեր ճակատի առջևում,
այլև մեր տեղավորման ներսում հարվածելու
համար մենք պետք է մեր բոլոր գնդացիը-

ները խորութեամբ այնպես բաժանենք (ե-
շելոննացնենք), վոր յերբ հակառակորդը մեր
պաշտպանութեան շրջանը ներխուժի, կարելի
լինի մեր տեղավորման խորքից ուժեղ կրակ
վարել: Մակայն միայն կրակը քիչ է, պետք է
դեռ մարտիկներին եւ բաժանենք այնպես, վոր
հակառակորդը, յերբ ճեղքի մեր ճակատը,
հանդիպի մեր տեղավորման խորքից տեղի ու-
նեցող ուժեղ հարվածին:

Այդ խնդիրները պաշտպանութեան ժամա-
նակ ստիպում են բոլոր մարտիկներին բաժա-
նել յերկու մասի: Մարտիկների մի մասը
պետք է կանգ առնել տա հակառակորդին ճա-
կատում, աշխատելով նրան ճակատի առջե-
վում ջախջախել, իսկ մյուս մասը տեղավոր-
վել յետեւից թիկունքում, այն նկատառումով,
վոր յեթե հակառակորդը ճեղքի մեր ճակատը
և սկսի ներխուժել թիկունքը, արագ և հան-
կարծակի հարված հասցնելով թեւից նրան վո-
չընչացնել: Այն մասը, վորը տեղավորվում է
ճակատում, կոչվում է, ինչպես նաև հար-
ձակման ժամանակ, կաշկանդիչ խումբ, իսկ
մարտիկների այն մասը, վորը տեղավորվում է
կաշկանդիչ խմբի յետևում հակառակորդին
հանկարծակի հարված հասցնելու համար,
կոչվում է հարվածային խումբ: Կաշկանդիչ
խումբն այդ դեպքում սովորաբար յերկու ան-
դամ ավելի յե նշանակվում հարվածայինից:
Հարվածայինից նա ավելի յե այն պատճառով,

վոր նա առաջինն է լինում, վորը գլխավորապես յենթարկվում է հակառակորդի հարձակման ամբողջ ծանրութեանն ու զորութեանը, իսկ հարվածային խումբն արդեն հարվածում է քայքայված հակառակորդին, վորը ներխուժել է մեր պաշտպանութեան շրջանը:

Թե՛ հարձակման և թե՛ պաշտպանութեան ժամանակ բացի կաշկանդիչ և հարվածային խմբերից, պետք է դուրս բերվի նաև մարտիկների մի մաս, վորը տեղավորվելով մարտակարգի յետևում, նշանակվում է վոջնչացնելու հակառակորդի այն մասնը խմբերին, վորոնք կարող են հարձակվել ճակատից կամ թիկունքից: Այդ մասը կոչվում է ոժանդակ:

Առաջներում, համաշխարհային և քաղաքացիական պատերազմի ժամանակ, ոժանդակի համար շատ դեպքերում նշանակում էին ամբողջ զորքի մոտ $\frac{1}{3}$ — $\frac{1}{4}$ մասը: Այդպիսի մեծ ոժանդակը թուլացնում էր մարտ մղող զորքերին և ստիպում էր նրանց զործել անվճռական կերպով և մեծ զգուշութեամբ: Մեր ներկա կանոնադրքերն ասում են, վոր մարտի մեջ պետք է միանդամից մեծ ուժեր մտցնել, թողնելով համենայն դեպս ոժանդակում միմիայն մի փոքրաթիվ մաս, մոտավորապես բոլոր ուժերի $\frac{1}{10}$ մասը, այսինքն դումարտակի համար՝ 1 դասակ, գնդի համար՝ 1 վաչառ:

Կարդալով գլուխը, կարդացածն ստուգելու և լավ յուրացնելու համար պատասխանեցեք հետևյալ հարցերին. —

1. Ինչո՞ւ յե հետևակը համարվում զորքի հիմնական տեսակ:

2. Ի՞նչն է կոչվում զորաշարժ:

3. Ի՞նչ է շրջանցումը, շրջափակումը, ձեղքվածքը:

4. Ձուկի ինչպիսի մարտակարգեր են գործադրվում ներկայումս:

5. Ի՞նչ է նշանակում հարվածային և կաշկանդիչ խումբ:

6. Ինչո՞ւ յե հարձակման ժամանակ կաշկանդիչ խումբը հարվածայինից փոքր, իսկ պաշտպանության ժամանակ՝ մեծ:

ՀԵՏԵՎԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՐԳԵՐԸ՝ ՊԱՅՑՊԵՆՎՈՂ ՀԱԿԱՌԱՎՈՐԳԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼԻՍ

Մարտում ամենակարևորը—հակառակորդին ջախջախելն է: Իրա ամենալավ միջոցը՝ հակառակորդի վրա հարձակվելն է, չսպասելով, վոր նա մեզ վրա հարձակվի: Միայն այդ ժամանակ կարելի յե իրեն ընտրել և՛ տեղ և՛ ժամանակ, իսկ հակառակորդին մնում է սպասել և գուշակել, թե վորտեղ և յերբ իրեն կհարվածեն:

Այն մարտը, վորով մենք հարձակում ենք գործում, կոչվում է հարձակողական մարտ:

Հարձակողական մարտում հետևակը ձրգտում է վերացնել այն բոլոր խոչընդոտները, վորոնց առաջադրում է պաշտպանվող հակառակորդը, կրակով և շարժումով կարճել նրա

գիմադրութիւնը, նրան կորուստներ պատճառել և վերջապես խլել նրա գրաւած գիրքերը և այն ամենը, ինչ վոր գտնվում է այնտեղ՝ հրանոթները, գնդացիրները, գերիներին և այլն:

Ամենադժբախտը ուղուտը հարձակվողների համար այն է, վոր մենք կարողանում ենք հարձակվել այն ուղղութեամբ, վորտեղից մեզ ձեռնուռ յե, վորտեղ հակառակորդի (հետեւակի և գնդացիրների) ուժերը քիչ են և յերբ մեզ հարմար է, իսկ պաշտպանվել՝ մենք հաճախ ստիպված ենք այն ուղղութեամբ, վորով հակառակորդը մեզ հակադրում է:

Հակառակորդը չգիտենալով, թե վորտեղից ենք մենք հարձակվելու, վորտեղ է լինելու մեր դժբախտը հարվածը, պետք է իր զորքերը պահի ամբողջ ճակատի յերկարութեամբ՝ լիակատար մարտական պատրաստութեան մեջ:

Այդ բանն արագ կերպով հոգնեցնում և իջեցնում է մարտունակութիւնը:

Ժամանակակից պատերազմում շնորհիվ հրետանու կրակի, հետևակը հարձակման ժամանակ կարող է ընկնել հրետանային կրակի տակ և կորուստներ ունենալ այնպիսի հեռավորութեան վրա, վորտեղից նա դեռևս չի կարողանա իր կրակային միջոցներով հարվածել հակառակորդին: Մարտի այդ ժամանակ հակառակորդի հրետանու դեմ կռիվ է մղում մեր

հրետանին, ապահովելով դրանով մեր հետե-
վակը հարվածից:

Ինքը, հետևակն իր կրակի միջոցներով
մարտի յե անցնում միմիայն այնպիսի հեռա-
վորությունից, վորտեղ հաստոցավոր գնդա-
ցիրները կարողանում են իսկապես հակառա-
կորդին շարել, այսինքն սկսած մոտավորա-
պես 1 կիլոմետր հեռավորությունից:

Հետևակի հարձակողական մարտը բա-
ժանվում է չորս շրջանի: Առաջին շրջանը՝
մոտենալն է, յերբ հետևակը պաշտպանվողի
հրետանային կրակի տակ շարժվում է մինչև
այնտեղ, վորտեղից մեր հաստոցավոր գնդա-
ցիրները կկարողանան բաց անել իրենց իսկա-
կան կրակը:

Յերբ հետևակը կմոտենա հակառակորդին
այնպիսի հեռավորության վրա, վորտեղից
նա կկարողանա իր գնդացիրներից կրակ բա-
նալ, կոչվում է յերկրորդ շրջանը—հարձա-
կումը:

Յերբ հետևակը մոտենա հակառակորդին
այնպիսի հեռավորության վրա, վորը կարելի
յե մի թափով վազել և անցնել (200-300
քայլ), նա հակառակորդի վրա սվինամարտի
յե հարձակվում: Այդ շրջանը կոչվում է գրոն:

Չորրորդ և վերջին շրջանը հաջողությու-
նից ոգտվելը, այսինքն հակառակորդին հե-
տապնդելն է, նրա թնդանոթները, գնդացիր-
ները, գերիները և այլն խելել:


Մամբրամասն քննեք այս շրջաններից յուրաքանչյուրը:

Յերբ հակառակորդը հեռու յե և նա չի կրակում, ամբողջ հետևակը միասին առաջ և շարժվում ընդհանուր զորասյուներով:

Հենց վոր հակառակորդը մեզ նկատի, իսկույն և յեթ ի հարկե հրետանային կրակ կրանա: Եարունակել շարժումն ընդհանուր զորասյունով հրետանու կրակի տակ՝ ձեռնատու չե, — հակառակորդը կարող և մեզ մեծ կորուստներ սլառճատել: Ուստի հետևակն սկըսում և շարժվել փոքրիկ զորասյուներով — վաշա—առ վաշտ, դասակ—առ դասակ և ջոկ—սո ջոկ: Մենք վորքան ավելի յենք մոտենում հակառակորդին և վորքան ուժեղ և նրա կրակը, այնքան ավելի մանր մասերի յենք բաժանվում (մասնատվում) տեղանքում, աչխատելով ուրտադործել յուրաքանչյուր մացառ և յուրաքանչյուր ձորակ հակառակորդին ծածուկ մոտենալու և մեր կորուստները պակասեցնելու համար:

Սյդ շրջանում հակառակորդի ամենագլխավոր խնդիրն է—արհեստականորեն ուղտվելով ծածկարաններից ու ծածուկ մատույցներից, արագ և աննկատելի կերպով հասնել հարձակման շերտը, վորտեղ պետք և համարյա ամբողջ ժամանակ շարժվել հակառակորդին յերևալով իր դնդացիրների և հրետանու կրակի պաշտպանության տակ:

Այն տեղանքում, վորտեղ ծածուկ մա-
տույցները չկան, հրետանու կրակի տակ դա-
տակը մասնատվում և ջրիերի, ունենալով գըլ-
խում ձեռքի գնդացիներ:



Յժանկ. 8. Հակառակորդին ստանալու մի որինակ

Հրաձգային ջրիերը շարժվում են հետևելոց
տանդղածև ոճաշարքով, յերամաշարքով կամ
չղթայածև՝ նայած ճանապարհին հանդիպած
ծածկարաններին և հակառակորդի կրակին
(գծանկ. 8):

Բաց տեղերը, հրետանային կրակի տակ,
ջրիերը վազում անցնում են վորջան կարելի յե
տրադ կերպով միանգամից ամբողջ ջրիով
կամ մեկ-մեկ, սակայն սլմեն կերպ խուսա-

փում են ընդհանուր շարժումը խափանելուց :

Յեքը հետևակը մոտենում է հակառակորդին այնպիսի հեռավարության վրա, վորտեղից ջոկերը կարող են բաց անել իրենց կրակը, սկսվում է հարձակման շրջանը (մոտավորապես 1 կիլոմետրից) :

Հարձակումից սուաջ դասակի հրամանատարը պետք է հավաքի ջոկերի հրամանատարներին և տեղանքում խնդիրը նրանց բացատրի: Խնդիրը բացատրելով դասակի հրամանատարն իր ուժերը բաշխում է՝ նայած տեղանքին և հակառակորդի կրակին և յուրաքանչյուր ջոկին տալիս է խնդիր:

Հարձակումն էլ վարում են այնպես, ինչպես և մոտենալը, այնպիսին ջոկերն աշխատում են վորքան հնարավոր է ծածուկ մոտենալ հակառակորդին, վաղելով մեկ ծածկարանից մյուսը: Տարբերությունը միմիայն նրանումն է, վոր սկսում են կրակել վաշտային կամ դումարտակային հաստոցավոր զնդացիները, իսկ հրաձգային ջոկերը, ողավելով այդ կրակից, աշխատում են վորքան կարելի յե ավելի մոտ շարժվել հակառակորդին: Հաստոցավոր զնդացիները կրակ են տեղում գլխավորապես հակառակորդի այն զնդացիներին վրա, վորոնք առանձնապես խանդարում են մեր հետևակի առաջխաղացմանը, ինչպես և այն տեղերի վրա, վորտեղ յերևան է բերված հակառակորդի (զորայուս, ոժանդակներ և այլն) կուտակում:




Рис. 5. Композиция в пейзаже

Մովորարար առջևից՝ մեկ կրակային
դիրքից մյուսը շարժվում են ձեռքի գնդացի-
ները, իսկ նրանց յետևից հրաձգային ջոկերը՝
մեկ ծածկարանից մյուսը (գծանկ. 9) :


Հաստոցավոր գնդացիներն իրենց դիր-
քերն ավելի քիչ են փոխում, քան ձեռքի գըն-
դացիները, քանի նրանց կրակի հեռավորու-
թյունը թույլ և տալիս նրանց համեմատաբար
յերկար մնալ մեկ տեղում : Բացի դրանից,
հաստոցավոր գնդացիքը կարող և կրակ տեղալ
հրաձգային ջոկերի արանքներից և նրանց
դիտի վրայից :

Մոտենալով հակառակորդին 800 մետր
հեռավորության վրա, ձեռքի գնդացիներն
սկսում են կրակել : Հաստոցավոր և ձեռքի
գնդացիների կրակն ամբողջ ճակատի վրա
հավասարաչափ չեն կատարում, այլ կատա-
րում են կենտրոնացած ձևով, այսինքն մի
վորևե տեղի վրա, հակառակորդի մոտ, վորն
իր կրակով արգելում և մեր առաջ շարժվելը :
Միանգամից մի քանի գնդացիներ այդ տեղի
վրա յեն թափում իրենց կրակը, վորպեսզի
դրանով ստիպեն հակառակորդին լռել : Հրա-
ձգային ջոկերն ոգավելով դրանից, աշխատում
են վորքան կարելի յե արագ կերպով մոտենալ
հակառակորդին այնպիսի հեռավորության
վրա, վորտեղից կարելի լինի նրա վրա սվի-
նամարտի հարձակվել : Հրացաններով զինված

հրաձգային ջակերը կրակ են բաց անում մի-
միայն 400 մետրից սկսած, քանի վոր հակա-
ռակորդից 400 մետրից պվելի հեռավորու-
թյան վրա գլխաչումն աննշան ե և հարձակումը
կուշանա: Այսպիսով մոտենալով հակառա-
կորդին 400 մետրի վրա, հարձակվող հետե-
վակը հակառակորդի վրա տեղում ե ամեն
տեսակի կրակ—և՛ գնդացրային և՛ հրացանա-
յին: Հրետանին ել, ի հարկե, կրակում ե իր
հերթին:

Յուրաքանչյուր հրաձիգ պետք ե կարողա-
նա հակառակորդի տեղանքում արագ կերպով
վորոնել, վորոշել մինչև նա յեղած տարածու-
թյունը և պատրաստվել կրակի համար, այն
հաշվով, վոր նրան հաղթելով առաջ շարժվի:
Յեվ յուրաքանչյուր հրաձիգ պետք ե այնպես
կրակ բանա, վոր հակառակորդը կամ բոլորո-
վին չկարողանա նրան նկատել, կամ թե նա
հակառակորդի համար հանդիսանա իբրև մի
աննշան նպատակ: Այդ պատճառով հրաձիգն
իբրև թաքստոց պետք ե ոգտադործի յուրա-
քանչյուր դար ու փոս, մացառ, միայն թե կա-
րելի լինի հակառակորդին լավ տեսնել և հար-
մար կերպով նրան գնդակոծել: Յուրաքան-
չյուր հրաձիգ պետք ե միշտ հիշի յերկու գըլ-
խավոր կանոն. հաջող կերպով հարմարվել
տեղանքին և լավ տեսնել հակառակորդին:

Մոտենալով հակառակորդին 200 մետր
հեռավորության վրա, հեռուակը շեշտակի



Տժժժժ. 10. Գրքի մեկ պրիմի

կերպով հարձակվում և հակառակորդի վրա սվինամարտի (գծանկ. 10) :

Գրոհի դիմելուց առաջ դասակի հրամանատարը միշտ կազմում և գրոհի սլանը, այսինքն, թե ինչպես գնդացիներն ու նոնաձիգները պետք և պաշտպանեն հրաձգային ջոկերի գրոհն ուժեղ կրակով (ամենից լավ և թեմբին), հակառակորդի դիրքի վոր գծին հարվածել: Հրաձգային ջոկերը խմբվում են դասակի թևերից մեկի մոտ և դասակը ցույց և տալիս գրոհի ուղղությունն ու տեղը:

Գրոհի մոմենտին ամբողջ հետևակը պետք և համակված լինի մեկ ձգտումով—ձեռնամարտով վոչնչացնել հակառակորդին: Հետևակի բոլոր կրակային միջոցները կրակ են վարում և պատրաստում են գրոհը:

Գրոհի մոմենտին ձեռքի գնդացիներն արագ կերպով առաջ և շարժվում գրոհող ջոկի թևը (տես գծանկ. 10) և հակառակորդի վրա կրակ և բանում, դրանով աջակցելով գրոհի հաջողությանը:

Յուրաքանչյուր հետևակային մաս մոտենալով հակառակորդին, ինքնուրույն կերպով կատարում և նրա վրա գրոհ, առանց հրամանի սպասելու:

Գրոհն սկսելով, դասակի հրամանատարն ու ջոկի հրամանատարը յուրաքանչյուրը՝ հակառակորդի առաջին բունը գրավելուց հետո պետք և առաջուց կազմի իր գործողություն-

ների պլանը: Անհրաժեշտ է նախապես նկատի ունենալ հակառակորդի հարևան և ավելի խորքերում տեղավորված բների հակադրոժողությունները:

Ներխուժելով հակառակորդի տեղավորման մեջ և վոչնչացնելով նրա առջևի բները, հետևակը պետք է աշխատի խոթվել հակառակորդի պաշտպանության խորքը, վորպեսզի արագ կերպով տիրանա նրա գրաված ամբողջ շրջանին: Այդ դեպքում հակառակորդի նոր խմբերի հանդիպելիս պետք է խուսափել հակառակորդի ճակատին խմբելուց և աշխատել թափանցել այդ խմբերի ներսը և վոչնչացնել նրանց թևից և թիկունքից, լայն գործածության մեջ դնելով ձեռքի և հրացանի նունակները:

Հակառակորդի պաշտպանական շերտից ներս լքվելով, յուրաքանչյուր ջոկ պետք է պահպանի իրեն տրված ուղղությունը: Յեվ հենց վոր հակառակորդն արգելք հանդիսանա հարևան ջոկին և թույլ չտա նրան առաջ շարժվել, այդ դեպքում մյուս հրաձգային ջոկը կրակով ոգնության է հասնում իր այն հարևանին, վորն առաջ է շարժվում ընդդեմ այդ արգելքի: Անհրաժեշտ դեպքում աջակցություն ցույց տալով նաև գրոհով, ջոկերը շարունակում են արագությամբ շարժվել նախկին ուղղությամբ:

Յեթե ջոկը հակառակորդի պաշտպանական շերտում գրոհի կետը գրավելուց հետո չի

կարողանում առաջ շարժվել կամ թե հրաման
ե ստացել մնալ գրաված կետում, նա մտնում
ե պաշտպանողական դրուժյան մեջ, յետ չը-
պրտելով իր կրակով հակառակորդի այն բո-
լոր փորձերը, վորոնցով նա կամենում ե յետ
դարձնել գրաված կետը:

Ձևաջողված գրոհի դեպքում ջոկը պետք ե
ամրանա հակառակորդին մոտիկ մի տեղում,
դասավորի գնդացիները հարմար տեղերում և
պատրաստվի յետ շարտելու հակառակորդի
հակագրոհը: Յուրաքանչյուր հետևակային
մաս պետք ե իրեն կարգի բերի, պատրաստվի
նոր հարված հասցնելու, պատրաստի այդ
հարվածն իր կրակի միջոցներով և նորից գրո-
հի, առանց վերից հրաման սպասելու: Ջոկը
չպետք ե հետևի կողմից հեռանա առանց ավագ
հրամանատարի հրամանի:

1. Ինչո՞ւ յե հարձակվելն ավելի ձեռն-
տու, քան պաշտպանվելը:

2. Ի՞նչ շրջանների յե բաժանվում հար-
ձակողական մարտը:

3. Ինչպե՞ս են շարժվում ջոկերը մոտե-
նալիս:

4. Յե՞րբ ե սկսվում հրացանային և դըն-
դացրային կրակը հարձակման ժամանակ:

5. Ինչպե՞ս պետք ե պահի իրեն յուրա-
քանչյուր մարտիկ հարձակման ժամանակ:

6. Վո՞րտեղ են գտնվում և ի՞նչ են անում
մեր գնդացիները գրոհի ժամանակ:

7. Ինչպե՞ս ե գրոհը զարգանում և ամբ-
րացվում առաջին հաջողութիւնը:

8. Ինչպե՞ս ե վարվում ջոկն անհաջող
գրոհի դեպքում:

ՀԵՏԵՎԱԿԻ ՄԱՐՅԱԿԱՐԳԵՐԸ ՊԱՆՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հետևակը չի կարող միշտ ել հարձակվել,
վորովհետև հակառակորդը կարող ե ավելի ու-
ժեղ լինել և ինքը հարձակվել, կամ թե ուղ-
ղակի մեր խնդիրը հարձակվելը չե: Այդ դեպ-
քում հետևակն ինքը տեղում մնալով, ստիպ-
ված ե կռվել հարձակվող հակառակորդի դեմ:

Կռվի այդ տեսակը, յերբ հետևակը կրո-
վում ե տեղում մնալով, կոչվում ե պաշտ-
պանութիւն կամ պաշտպանողական մարտ:


Յե՞րբ և ի՞նչ նպատակով ե հետևակը
պաշտպանվում:

Հետևակի մեր մարտական կանոնագիրքը
նախատեսում ե հինգ դեպք:

Առաջին դեպքում մենք պաշտպանութիւն
ենք անցնում այն ժամանակ, յերբ դեռ պատ-
րաստ չենք հարձակման անցնելու—չեն մոտե-
ցել ոժանդակները, արկեր և փամփուշտներ
չեն հասցրել կամ թե չի վերջացել դեռևս մեր
զորամասերի անհրաժեշտ վերախմբավորումը
և այլն: Պաշտպանութիւն այդ դեպքը նպա-
տակ ունի ժամանակ շահել՝ պատրաստվելու
հարձակման անցնելու համար:

Յերկրորդ դեպքում այն ժամանակ, յերբ

որինակ, մեր գումարտակի խնդիրն և հարձակման անցնել և դրա համար կենտրոնացնում և հարվածային խումբը հակառակորդի կցուրդի կամ թևի դիմաց մի տեղում, իսկ թևը սլաշտպանելու համար թողնվում և միմիայն մի դասակ, վորին տրված են վաշտային զնդացիւրներ: Այդ դասակին խնդիր և ա-



Գծանկ. 11. Գասակի պաշտպանութիւնը մինչև գլխավոր ուժերի հասնելը

ուղարկուում, պաշտպանվելով ապահովել հարձակվող հարվածային խմբի թևը:

Յերրորդ դեպքում պաշտպանությունը կարող է դործ դրվել վորև ե կետ կամ բնագիծ ժամանակավորապես դրավելու և սլահելու ժամանակ: Որինակ, մեր դասակը կաղմելով գլխի յերթալին ուղեկալ, Բ բարձունքի մոտ դեմ առնելով ավելի ուժեղ հակառակորդի, չի կարողանում առաջ շարժվել (գծանկ. 11):

Դասակն իր հարձակումը չի կարող շարունակել, վորովհետև նրա վրա հարձակվում ե ավելի ուժեղ հակառակորդ, վորը ձգտում ե գրավել անցարանը: Իսկ այդ անցարանն անհրաժեշտ ե գումարտակի գլխավոր ուժերի մոտենալու համար, վորոնք գտնվում են Բ անտառում:

Այդ դեպքում դասակը պաշտպանության անցնելով, պետք ե իր կրակով կանգ առնել տա հակառակորդին մինչև գումարտակի գլխավոր ուժերի մոտենալը:

Չորրորդ դեպքում պաշտպանությունը տեղի յե ունենում մարտից յեխնելը պաշտպանող դորամասերի դործողություններով: Որինակ, հակառակորդի կողմից դուրս շարտված մեր վաշտը քաշվում ե գումարտակի հրամանատարի ցույց տված կետը: Վաշտի հրամանատարը հրաձգալին դասակների յետ քաշվելն ապահովելու համար թողնում ե իր գնդացրալին դասակը: Այդ դասակն արագությամբ դասավորվելով ցույց տված դիրքում, կանգ ե առնել տալիս հակառակորդի հարձակումը,

հնարավորութիւն տալով հրաձգային դասակ-
ներին անարգել կերպով քաշվելու նշանակված
կետը և այնտեղ տեղավորվել պաշտպանու-
թյան կամ հետազայում յետ քաշվելու հա-
մար: Հենց վոր գնդացրային դասակը կատա-
րում է իր խնդիրը, այսինքը կանգնեցնում է
հակառակորդին իր կրակով և դրանով ապա-
հովում է հրաձգային դասակներէ նահանջը,
վաշտի հրամանատարը կարգադրութիւնն է
անում կամ ազդանշան տալիս նրա հեռանալու
մասին:

Հիմնգերորդ դեպքը կարող է լինել պաշտ-
պանութիւնը պահպանության ժամանակ:

Յեթե պաշտպանվող զորամասերը տեղա-
վորված են հանգստանալու, դրվում է անշարժ
պահպանութիւն. յեթե զորամասերը յերթ են
կատարում, նրանք դնում են յերթի պահպա-
նութիւն. վերջապես յեթե զորամասերը վա-
րում են հարձակողական մարտ, կամ տեղա-
վորվում են պաշտպանվելու համար, այդ
դեպքում դրվում է մարտական պահպանու-
թիւն: Յերթի պահպանութիւնը շարժական
է, յերբ շարժվում է պաշտպանվող զորա-
մասի շարժման ուղղութիւնմբ: Նույնպես շար-
ժական է մարտական պահպանութիւնը, յե-
թե պահպանվող զորամասը վարում է հարձա-
կում:

Անշարժ և մարտական պահպանութիւնը
պաշտպանության ժամանակ սովորաբար լի-

նում են անշարժ և տեղավորվում են այնտեղ,
վորտեղ և մարտ են վարում, յերբ հակառա-
կորդը յերևում է:

Պաշտպանության ժամանակ հետևակի
հիմնական խնդիրն է—պահպանելով գրաված
տեղանքը, իրենց կրակային միջոցներով հա-
կառակորդին հարվածել և փայփայել նրա ու-
ժերը: Իսկ յեթե հակառակորդին կամ նրա
մանր խմբերին այնուամենայնիվ հաջողվի մո-
տենալ մեզ այնքան մոտիկ, վոր դրանով վը-
տանդ սպառնա գրավելու մեր դնդացիները,
այդ դեպքում հրաձգային ջոկերը, դեռևս
գործող դնդացիների աջակցութեամբ, շեշ-
տակի հակա-գրոհով պետք է դուրս շարտեն
հակառակորդին, վորը ներս է խուժել պաշտ-
պանութեան մեջ շրջանը:

Պաշտպանվողի գործողությունները միշտ
պետք է լինեն ամենավճռական: Կրակային մի-
ջոցները կրակը վարում են մինչև վերջին փամ-
փուռչար, պարտության մատնելով և քայքա-
յելով հակառակորդի ուժերը: Հրաձգային ջո-
կերը շեշտակի հարվածով յետ են շարտում
մոտեցող հակառակորդին և ներխուժածին
մինչև վերջը կոտորում են:

Տեղանքը պաշտպանության համար հակա-
յական նշանակություն ունի: Այդ տեղանքը
վոչ միայն պետք է ուսումնասիրեն բոլոր հրա-
մանատարները, այլև մարտիկները, վորպես-
զի ամենալավ կերպով կարողանան ոգտագոր-

ծել իրենց զենքը և հակա-գրոհի անցնեն: Պաշտպանության համար նախանշանակված տեղանքը մեծապես ազդում է նաև իր՝ մարտակարգի կառուցման վրա:

Ինչպիսի՞նք պահանջների պետք է բավարարի տեղանքը:

Հետևակի մեր մարտական կանոնադիրքն ասում է, վոր այդ տեղանքը պետք է հնարավորություն տա ամենաձեռնտու կերպով տեղավորելու կրակային միջոցները (զնդացիրները), վորոնք իրենց կրակով ծածկեն ամբողջ տեղանքը, վորը դտնվում է թե՛ պաշտպանության շրջանի առջևում և թե՛ նրա յետևում և վորպեսզի նույնպես ապահովվի հարևանների հետ ունեցած կրակային փոխադարձ ոգնությունը: Կրակային միջոցներն ու կենդանի ուժը (հրաձիգները) պետք է ծածկված լինեն հակառակորդի ողային և յերկրային դիտողությունից, վորպեսզի կարելի լինի կռվի ժամանակ զերծ լինել ավելորդ կորուստներից: Իր կրակային միջոցներով կրակը հաջող վարելու համար պետք է ունենալ հաջող դիտողություն: Ուստի պաշտպանության համար մեր ընտրած տեղը պետք է հնարավորություն տա դիտողություն կատարելու առջևի տեղանքի վերաբերյալ:

Բացի դրանից, տեղանքը պետք է հնարավորություն տա հեշտ և արագ կերպով տեղական առարկաներն ոգտագործելու պաշտպա-


նության համար, վորովհետև պաշտպանության առջևի բնական խոչընդոտները (գետ, կիրճ, ճահիճ) ուժեղացնում են պաշտպանությունը:

Ի հարկե, դժվար ե գտնել պաշտպանության համար այնպիսի տեղանք, վորը բավարարի վերոհիշյալ բոլոր պահանջներին, սակայն հարկավոր ե դրան հասնել:

Անհրաժեշտ ե պաշտպանության համար տեղավորվելիս գնել իրեն զգալիորեն ավելի ձեռնտու պայմանների մեջ, քան այն պայմանները, վորոնց մեջ կարող ե լինել հարձակվող հակառակորդը:

Պաշտպանության շրջանները.— Հետևակի մեր մարտական կանոնադրության համաձայն, գնդացրային կամ հրաձգային շոկը (յեթե վերջինս դիրք ե գրավում կրակ վարելու համար) կազմում ե կրակային կետեր: Դասակի այդ բոլոր կրակային կետերը միասին առած՝ կազմում են հենց պաշտպանության շրջանը: Դասակային պաշտպանության շրջանները միասին առած կազմում են վաշտային, իսկ վաշտային պաշտպանության շրջանները՝ գումարտակային պաշտպանության շրջան:

Պաշտպանության յուրաքանչյուր շրջան բաղկացած ե տեղական առարկաներից, վորոնց տիրապետելն ապահովում ե շրջանի առջևի և կողքերի ամբողջ տեղանքի և տվյալ շրջանի մեջ մտնող տեղական առարկաների ա-



Գծանկ. 12. Պաշտպանության շրջանների սխալ դասավորում


Ջանքների խաչաձև դնդակոծումը:

Որինակ, հարկավոր է արդյոք, վոր մեր դասակի պաշտպանության շրջանը իր սահմաններով հասնի հարևան դասակների շրջաններին (աջից և ձախից): Այդ անհրաժեշտ է, վորովհետև յեթե մենք առաջին դասակին տանք Ա մացառների շրջանը, իսկ յերկրորդին՝ Բ բարձունքը (տես գծանկ. 12), այդ դեպքում նրանց միջև յեղած տարածությունը կարող է

ողտադործել հակառակորդը, վորը մեզ ա-
 րանձին-արանձին կջախջախի մոտենալով մեզ
 ձորակով: Հակառակորդի հետախուզությունը
 ներս մտնելով այդ արանքները, հեշտությամբ
 կհասկանա պաշտպանության մեր սխտեմը,
 վորը կարող է առաջ բերել մարտում անհաջո-
 դություն:

Շրջաններն իրենց սահմաններով պետք է
 միմյանց կաշեն. նրանք մոտավորապես պետք
 է վորոշեն այնպես, ինչպես այդ 13-րդ դժա-
 նկարում կետերով ցույց է տրված:

Շրջանների այդպիսի բաժանումով հակա-



Քժանկ 13. Փոխադարձաբար միմյանց ողնող շրջանների
 ճիշտ դասավորում:

առկորդին դժվար կլինի գուշակել մեր տեղա-
վորությունը պաշտպանության ժամանակ:

Սակայն ուժերը չեն բավականացնի նշա-
նակված շրջանում (սահմանների ներսում)
տեղանքն ամբողջովին գրավել: Պաշտպանու-
թյան շրջանի սահմաններում ցեղած տեղան-
քը, վորը գրավված չե գնդացրային և հրա-
ձգային շոկերով, պետք է լցված լինի պահե-
տի և կեղծ խրամատներով և համեմայն դեպս
գտնվի անընդհատ դիտողության և յետևում
տեղավորված զորամասերի յերկու հարևան
շրջանների կրակային միջոցների գնդակոծման
ուսկ:

Վաշտերի և գումարտակների միջև յեղած
ազատ տարածությունները չպետք է ավելի
լինեն ձեռքի գնդացիրների գործոն կրակի հե-
ռավորությունից (800-1000 քայլ), իսկ դա-
սակների միջև յեղածը պետք է լինի դրանից
եւ պակաս:

Սակայն, վորչա՞ր պետք լինի դասակի
համար նախանշանակվող շրջանը:

Մեր հետևակային կանոնադիրքը յեւնե-
լով դասակի կրակային ուժի հաշվառումից,
ընդունում է, վոր դասակը կարող է հաջող
կերպով պաշտպանել մինչև 500 մետր (750
քայլ) ճակատ, և նույնքան եւ խորություն ու-
նեցող շրջան: Այդ չի նշանակում, ի հարկե,
վոր դասակին միշտ եւ այդ չափի շրջան է
տրվելու, կարող է լինել նաև ավելի կամ պա-

կաս տեղամաս: Ամենակարևոր ուղղութիւններն էր, վորտեղից կարելի յե հակառակորդի գլխավոր հարվածն սպասել, շրջանները պետք ե իրենց ճակատով լինեն ամբի նեղ: Այդ բանը հնարավորութիւն կտա միևնույն կրակային միջոցներին ամբի հուսալի կերպով պաշտպանել ճակատի նեղ տեղամասը:

Տեսնենք, թե ինչպես են բաշխվում ուժերն ու միջոցներն այդ շրջաններում, այսինքն ինչպես ե կազմվում մարտակարգը պաշտպանութեան ժամանակ (գծանկ. 13): Գումարտակի մարտակարգը պաշտպանութեան ժամանակ սովորաբար բաղկացած ե՝

Կաշկանդիչ խմբից, վորը տեղավորվում ե պաշտպանութեան գումարտակային շրջանում շարանաձև դեպի խորքը և ցրիվ յեկած շրջանի ամբողջ լայնութեամբ: Այդ խումբը գործում ե կրակով կարճ հակադրոհներով, նպատակ ունենալով կորուստներ պատճառել հակառակորդին և քայքայել նրա ուժերը, այդպիսով բարենպաստ պայմաններ ստեղծելով հարվածային խմբով նրան մինչև վերջը կոտորելու:

Հարվածային խմբից, վորն իր կրակի միջոցներով տեղավորվում ե պաշտպանողական շրջանի խորութեամբ: Այդ խումբը պետք ե կրակային միջոցների ոժանդակութեամբ և հակահարվածներով վոչընչացնի պաշտպանողական շրջանը ներխուժող կամ նրան մոտեցող

հակառակորդին: Հարվածային խումբը պետք է գործի արագ և հակառակորդի համար տնսպասելի կերպով:

Ոժանդակից, վորը նախանշանակված է պատահական հակադործողությունների համար. որինակ, յերբ հակառակորդի մանր իրմբերն անսպասելի կերպով հայտնվում են մեզ մոտ՝ թևի կամ թիկունքի վորևե տեղում:

Բայց կարելի չե նաև ոժանդակ դուրս չլրբերել:

Վորպեսզի կարելի լինի պաշտպանության ժամանակ մեծ ճկունություն ստեղծել և ամենալավ յեղանակով ոգտագործել իր կրակի ուժերը, կցելով նրանց կենդանի ուժի հակադրոհներին, թե՛ կաշկանդիչ, և թե՛ հարվածային խմբերը դասավորվում են շարանաձև: Այդ նշանակում է, վոր ստորաբաժանումները (ջոկը, դասակը) դասավորվում են ստորաբաժանումների հետևից, սակայն այնպես, վոր յետևի յեղածները կարողանան հակառակորդի վրա կրակ բանալ առջևի յեղածների արանքներով:

Մարտակարգի շարվածքը, նրա տեղանքին հարմարվելը և մարտում ունեցած գործողություններն ավելի մանրամասնորեն քննելու համար, վերցնենք վաշտի հրաձգային դասակը, վորը կաշկանդիչ խմբի մեջ է մըտնում: Մենք կաշկանդիչ խումբն ենք վերցնում այն պատճառով, վոր նա հակառակորդի հար-

ճակման ժամանակ կրում ե պաշտպանողական մարտի գլխավոր ծանրությունը:

Մենք արդեն գիտենք, վոր դասակը պաշտպանելու համար վերցնում ե իր ճակատով և խորությամբ մոտ 500 մետր մեծություն ունեցող շրջան:

Դասակի համար պաշտպանության շրջանի նշանակումը տեղի յե ունենում սովորաբար հետևյալ կարգով. վաչտի հրամանատարը գումարտակի հրամանատարի դիտակետի վորևե տեղում ստանում ե նրանից տեղանքում կամ յեթե հնարավոր չե՝ քարտեղում վաչտի խընդիրը և պաշտպանության շրջանը: Դրանից հետո վաչտի հրամանատարը, յեթե ժամանակն ու պարագան թույլ են տալիս, հավաքում ե դասակների հրամանատարներին և նրանց հետ միասին ավելի հարմար դիտակետից կատարում ե իրեն հանձնված շրջանի հետախուզությունը, գնահատման ե յենթարկում այդ տեղանքը, այսինքը վորոշում ե այն բանը, թե ինչ կերպ լավ կլինի լուծել իրեն առաջադրած խնդիրը և ամենից հարմարը կլինի ոգտագործել կրակային միջոցները և դասավորել վաչտի կենդանի ուժը: Վճիռ կայացնելով, վաչտի հրամանատարը դասակներին տալիս ե խնդիրներ: Այդ խնդիրներում պետք ե ցույց տրվի՝ վաչտի ընդհանուր խնդիրը, դասակների խընդիրը, ի՞նչ շրջան պետք ե պաշտպանել և գընդակոծման շերտը (սեկտորը), հարևանների

առջևը յեղած մոտակա շերտում ի՞նչ մատուցյցներ և տեղական առարկաներ պետք ե գնդակոծվեն թևային կրակով, վո՞րտեղից ըստանալ փամփուշտները և ո՞ւր ուղարկել վիրավորներին:

Ստանալով վաշտի հրամանատարից խնդիր և բացատրելով այդ խնդիրը, հրաձգային դասակի հրամանատարը ջոկերի հրամանատարների հետ միասին կատարում ե իրեն տրված շրջանի և գնդակոծման շերտի սահմաններում գտնված տեղանքի կրակի վերաբերյալ խիստ ուշադիր ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրության հիման վրա դասակի հրամանատարը վորոշում ե, թե դասակի ինչպիսի կրակային միջոցները ինքը պետք ե ոգտագործի հակառակորդի խմբին հարվածելու համար, յեթե նրան հայտնվեն և տեղանքում այդ կրակային միջոցների տեղավորման վո՞րկետերն ամենից ձեռնտու կլինեն կրակ վարելու և քողարկման (աննկատելի) համար:

Յեթե դասակին, բացի գնդակոծման վորոշ շերտից, նույնպես հատուկ խնդիր ե տրվում թևից գնդակոծելու հարևան շրջանի առջևի մեռյալ տարածությունը, այդ դեպքում դասակի հրամանատարն ամենից առաջ վորոշում ե, թե ձեռքի (յեթե այդպիսին տրված ե) կամ հաստոցավոր գնդացիների վոր ջոկին պետք ե հանձնարարել կատարելու այդ կարևոր խնդիրը:

Յեթե հովիտը, ձորը կամ յերկայնակի

կրակ պահանջող մեռյալ տարածութիւնը, 800 մետրից մոտիկ չե, հաշված այն կետից, վորտեղից նա պետք է գնդակոծվի, յեթե այդ մեռյալ տարածութիւնը ձգված է բավական հեռու, այդ դեպքում նրան գնդակոծելու համար պետք է անպայմանորեն նշանակել հաստոցավոր գնդացի:

Իսկ յեթե հարեան շրջանի առջևի մեռյալ տարածութիւնը չի ներկայացնում ընդարձակ շերտ, վորի գնդակոծումը չի պահանջում 800 մետրից ավելի կրակի հեռավորութիւն, այդ դեպքում, գնդակոծման այդպիսի նպատակի համար կարող է նշանակվել ձեռքի գնդացի մեկ ջուկ:

Հարեան շրջաններին մոտիկ մատուցների համար խնդիր ունեցող այդ գնդացիները կոչվում են «դաշունահար գործողութիւն» գնդացիներ: Այդ գնդացիները տեղավորվում են անպայմանորեն խիստ կերպով քողարկվելով տեղանքի ծալքերում կամ տեղական առարկաների (դար ու փոսերի, մացառների և այլն) յետևը, վորոնք ճակատի կողմից հանդիսանում են հակառակորդի հայացքից և կրակից պաշտպանելու ծածկարաններ:

Իր տեղավորման վայրը հակառակորդին շուտ ցույց չտալու համար, դաշունահար գործողութիւն գնդացիները կրակ են բացում միմիայն այն մոմէնտին, յերբ հակառակորդը հասնում է տեղանքի իր կողմից գնդակոծվող

չերտին: Յեթե դաշունահար գործողության
գնդացիին ավելի շուտ կրակ բանա (դեպի այլ
նշաններ), նրան հակառակորդը կնկատի, հրե-
տանու կրակը նրան կոչնչացնի և նա չի կարող
իր վրա դրված խնդիրները կատարել:

Գնդակոծման շերտում յեղած բոլոր կեն-
դանի նպատակները վոչնչացնելու համար մաս-
նակցում են դասակի կրակի բոլոր միջոցները:
Այդ կրակային միջոցներին են վերաբերում
ձեռքի գնդացիները (հաստոցավոր գնդացի, յեթե նա տրված է վաշտից, վորովհետև այժմ
դասակում հաստոցավոր գնդացի չկա), նռո-
նածիզներ, գլխավորապես ավտոմատով կամ
տեսողական նշանոց ունեցող հրացաններով
զինված լավագույն հրաձիգներ և հրաձգային
ջոկեր, յեթե նրանց նույնպես տրվում է կրա-
կի խնդիր: Յուրքանչյուր կրակային միջոցին
դասակի հրամանատարը տալիս է կատարելա-
պես վորոշակի խնդիր և տեղավորման վայր:

Հետևակի մեր մարտական կանոնագիրքն
ասում է, վոր հրաձգային ջոկն իր շրջանի
պաշտպանության համար պետք է առաջին
հերթին ոգտագործի գնդացիներն ու նոնակ-
ները: Հրաձգային ջոկերը տեղավորվում են
գլխավորապես հակառակ լանջերում (դեպի
մեր թիկունքի կողմը դարձած բարձունքների
լանջերին) և ոգտագործվում են գրոհների
համար:

Սակայն ի՞նչ խնդիրներ կարող են կատարել հրաձգային և դնդացրային ջոկերը, նրանք ի՞նչ տեղ կարող են գրավել դասակի մարտակարգում՝ պաշտպանության ժամանակ:

Հրաձգային ջոկեր. — Դասակի հրաձգային ջոկերի գլխավոր խնդիրն և արագ հակահարված հասցնել դասակային պաշտպանության շրջանը ներխուժած հակառակորդին: Ուստի հրաձգային ջոկերը տեղավորվում են դասակի պաշտպանության շրջանի ներսում՝ (խորությամբ) ծածուկ տեղերում (հակառակ ծալքերում և տեղական առարկաների յետև), վորտեղից հարմար կլինի հակադրոհի անցնել դասակի վորևե կետի վրա, վորը հակառակորդի կողմից խլվել կարող է:

Յեթե հրաձգային ջոկերը նախանշանակված են միմիայն այդ խնդրի համար, այդ դեպքում գոյութուն ունեցող ծածկարանների համեմատ նրանք կարող են տեղավորվել կամ միասին կամ յուրաքանչյուր ջոկն առանձին:

Մենք արդեն ասացինք, վոր բոլոր հրաձգային ջոկերը կամ նրանց մի մասը կարող են ոգտագործվել իրրև կրակային ուժ: Սակայն ի՞նչ դեպքերում հրաձգային ջոկը դառնում է կրակային ուժ: Կարող են լինել այդպիսի մի քանի դեպքեր:

Առաջին դեպքը. — Յերբ պաշտպանության շրջանի առաջին տեղանքը կտրտված է, նրա

ներա վրա յեղած բարձրութիւնները և տեղական առարկաները դասակի գնդակոծման շերտը բաժանում են մի քանի նեղ տեղամասերի, վորոնց գնդակոծման համար պահանջվում է հրաձգային դասակում յեղած գնդացիներից յերկուսից ավելի գնդացի:

Յերկրորդ դեպքը.—Յերբ հրաձգային ջոկերն ոգտագործվում են իբրև կրակային ուժ՝ դասակային գնդացիներից մեկի փոխարեն, վորը հասուկ խնդիր է ստացել գնդակոծելու հարևան շրջանի մոտի մատուցները:

Յերրորդ դեպքը.—Դասակի այն հրաձգային ջոկերի կրակային պաշտպանութեան համար, վորոնք հակահարված են հասցնում դասակի պաշտպանութեան շրջանը ներխուժած հակառակորդին:

Չորրորդ դեպքը.— Մարտի ժամանակ շարված գնդացիին փոխարինելու համար:

Կրակային խնդիրների կատարման համար նախանշանակված հրաձգային ջոկերը տեղավորվում են դասակի պաշտպանողական շրջանի առջևի յեզրի վրա այնպես, վոր այդ տեղերը լինեն վաշտային հաստոցավոր գնդացիների գնդակոծման շերտի սահմաններից դուրս:

Ձեռքի գնդացիների ջոկերը.—Ձեռքի գնդացիների հիմնական խնդիրն է 1200 քայլից (800 մետր) վոչ ավելի հեռավորութիւններից հարվածել հարձակվող հակառակորդի գնդացրային և հրաձգային խմբերին,

գլխավորապես նրանց առաջ շարժվելու մոմենտին: Ձեռքի գնդացիների համար դասակի հրամանատարը կրակային կետեր և ընտրում սովորաբար պաշտպանողական շրջանի առջևի յեզրի վրա այնպես, վոր նրանք չխանդարեն յետևում տեղավորված հաստոցավոր գրնդացիների կրակին:

Ձեռքի գնդացիները ծածուկ գրության մեջ մնում են այնքան, մինչև վոր հակառակորդը մոտենում և մոտավորապես 1200 քայլ (800 մետր) հեռավորության վրա և հրաձգության համար դիրք են գրավում միմիայն կրակ բանալու սկզբին:

Հաստոցավոր գնդացիի խնդիրն և հարվածել հակառակորդին՝ կրակի հեռավոր, միջին և մոտիկ հեռավորությունների վրա, գլխավորապես այդ նպատակների մոտենալու մոմենտներին:

Հաստոցավոր գնդացիի համար տեղ և ընտրվում, նայած մատուցների կարևորությանը, պաշտպանողական շերտի մոտ:

Հաստոցավոր գնդացիի գնդակոծման շերտը նշանակվում և կամ տեղական առարկաներով, յեթե կան այդպիսիները, կամ թե դասակի հրամանատարի կարգադրությամբ տրվող նշաններով (նշանաձողերով), այն դետքում, վորոնք դասակային շրջանի առջևի յեզրի կրակային կետերն ապահովում են հաստոցավոր գնդացիի կրակի հարվածից: Այդ նշանները

նույնպէս չպետք է նկատելի լինեն հակառակորդին :

Նռնանետներ. — Հետեւակը հրացանի նոնակներ նետելու համար ունի նոնանետներ : Նռնանետներին կարող են խնդիրներ առաջադրւիլ եւ կամ հակառակորդի խմբերին հարվածելու 400 մետր (600 քայլ) հեռավորութեան վրա՝ հաշված պաշտպանողական շրջանի առջևի յեղրից, կամ դնդակոծելու դասակի կրակային կետերը, յերբ հակառակորդը դրանց դրավի :

Նոնանետները սովորաբար դասավորւում են յերկու-յերեք նոնանետը միասին կամ մեկմեկ : Խմբովին դասավորւելու դեպքում նոնանետները գրավում են այնպիսի տեղ, վորտեղից հնարավոր լինի հրացանային նոնակներ նետել կրակային կետերի վրա, յեթի հակառակորդը դրանց գրավի :

Լավագույն հրաձիգներ. — Իրանցից դասակում կարող են լինել մի քանիսը : Նրանք զինված են ավտոմատներով և տեսողական կամ սովորական նշանոց ունեցող հրացաններով : Լավագույն հրաձիգներին խնդիր է տրվում մինչև 600 մետր (900 քայլ) հեռավորութեանից դիպուկ կրակով հարվածել հակառակորդի գնդացրորդներին կամ նրանց պետերին : Լավագույն հրաձիգների տեղավորման վայրը պետք է լինի խստորեն քողարկված : Բացի դրանից, լավագույն քողարկման համար լավա-

գույն հրաձիգներին տրվում են խալաթ-քո-
ղարկներ:

Դասակի հրամանատարը, յեթե դասակին
տրված են նոնանետներ, դասավորում է նրանց
կամ հակահարվածի համար նախանշանակված
հրաձգային ջոկերի առջևում, կամ թե կրա-
կային գործողության համար նշանակված հը-
րաձգային ջոկերի թևերում:

Առաջին դեպքում նոնանետները դրվում են
գույգ-գույգ արանքներում (միջանցներում)
հրաձգային ջոկերի տեղավորումից 60-80 մե-
տրի (90-120 քայլ) վրա, վորպեսզի կարելի լի-
նի կրակի տարափով շփոթություն քցել ներ-
խուժող հակառակորդի շարքերը, այն մոմեն-
տին, յերբ հրաձգային ջոկերն անցնում են
հակահարձակման:

Յերկրորդ դեպքում հրձիգները դրվում են
հրաձգային ջոկի թևերում, վորպեսզի կարելի
լինի կրակի տարափով յես շարտել մոտեցած
հակառակորդին, վորը հրաձգային խրամատից
40-50 մետր (60-75 քայլ) հեռավորության
վրա յե: Յերկու դեպքում ել հրձիգները գոր-
ծում են հրաձգային ջոկերից անբաժան:

Մենք մանրամասնորեն բացատրեցինք, թե
ինչ խնդիրներ կարող են առաջադրվել և ինչ
տեղ է դրավում յուրաքանչյուր ջոկ և յուրա-
քանչյուր կրակային միջոց դասակի մարտա-
կարգում պաշտպանության ժամանակ:

Այժմ տեսնենք, թե ինչպես ե կազմվում
մարտակարգը:

Յեթե պարագան թույլ ե տալիս, դասակի
հրամանատարը տեղանքն ուսումնասիրելուց
հետո հավաքում ե իր շուրջը (ծածուկ տե-
ղում, վորտեղից, սակայն, յերևում ե պաշտ-
պանության շրջանը) դասակի բոլոր մարտիկ-
ներին և ցույց ե տալիս նրանց այն ուղղու-
թյունը, թե վորտեղից ե սպասվում հակառա-
կորդը և յերբ կարող են հայտնվել իր առա-
ջավոր մասերը, վորտեղ են տեղավորվում հա-
րևան մասերը և ինչ խնդիրներ ունեն նրանք,
ինչ ուղղությամբ կարող են գնալ առջևից ի-
րենց ուղարկած մասերը (հետախու-
զություն և պահպանություն), բացատրում ե
իր վաշտի և դասակի խնդիրը, ցույց ե տալիս,
թե վորտեղ պետք ե գտնվի դասակի փամփշտի
կետը և ինչ ազդանշանով պետք ե փամ-
փուշտներ պահանջել, վորտեղ պետք ե տե-
ղավորվի վաշտի վիրակապության կետը, ուր,
ինչ ճանապարհներով պետք ե ուղարկել զին-
վորներն ու գնդերով վնասվածներին և վեր-
ջապես իր և տեղակալների գտնվելու տեղը:

Յեթե պարագան թույլ չի տալիս հավա-
քել դասակի բոլոր մարտիկներին, դասակի
հրամանատարը խնդիրը բացատրում ե ջոկերի
հրամանատարներին, իսկ նրանցից յուրաքան-
չյուրն ել՝ իր ջոկին:

Մարտիկներին դասակի խնդիրներն ու վը-

ձիւր բացատրելուց հետո, դասակի հրամանա-
տարը, թողնելով նրանց մի ծածուկ տեղում,
Չոկերի հրամանատարների, նոնանետների և
ընտրված լավագույն հրաձիգների հետ միա-
սին հետևողականորեն անցնում է նրանց հա-
մար ցույց տրված կրակային կետերը և յուրա-
քանչյուր կրակային կետից խնդիր է տալիս
դասակի այն կրակային միջոցին, վորը կարող
կրակ վարել այդ կետից:

Ի՞նչ պետք է բովանդակի իր մեջ կրակա-
յին միջոցներից յուրաքանչյուրին տրվող կրա-
կային խնդիր: Նա պետք է իր մեջ բովանդա-
կի վորոշ ցուցումներ յուրաքանչյուր զնդա-
ցրային և հրաձգային շոկի (յեթե վերջինս
ոգտադործվում է իբրև կրակային ուժ), նոնա-
նետների խմբի կամ առանձին նոնանետի հա-
մար: Յեւ պետք է ցույց տրվի, թե ինչ կետե-
րից պետք է կատարվի շոկի կրակը, վորտեղ
պետք է գտնվի շոկը կրակը բանալուց առաջ.
զնդակոծության շերտը (սեկտորը) կամ կրա-
կային միջոցներից յուրաքանչյուրի կրակի
ուղղությունը, հակառակորդը վոր բնագծին
մոտենալիս շոկը կամ նոնանետները պետք է
կրակ բանան. ո՞ւմ կարգադրությամբ պետք է
կրակ բանալ, — դասակի, թե շոկի հրամանա-
տարի, — ի՞նչ նշաններ պետք է տրվեն դրա
համար, ինչպես կապ պահպանել հարևանների
հետ և ով, ում հետ:

Հրաձգային շոկերին, յեթե նրանք նշա-

նակված են հակահարված տալու համար, խընդրում պետք է ցույց տրվի՝ ծածուկ տեղավորման վայրը յուրաքանչյուր ջոկի համար, յեման կետերը, վորտեղից պետք է վարել հակազրոհը յետ գրավելու համար հակառակորդի կողմից գրավված մեր վորևե կրակային կետը:

Հրաձգային ջոկերը, յեթե նրանք նշանակված են հակազրոհների համար, անհրաժեշտ է միացնել և դարձնել մեկ հարվածային խումբ՝ դնելով նրան դասակի հրամանատարի ոգնականի հրամանատարության տակ: Յեթե ջոկերը միացած են, դասակի հրամանատարը ցուցումներ է տալիս վոչ թե յուրաքանչյուր հրաձգային ջոկին առանձին-առանձին, այլ՝ իր ոգնականին, վորը համաձայն իրեն տրված ցուցումների կազմում է հարվածային խմբի գործողությունների պլանը: Այդ խմբի հակազրոհը կատարվում է նրա պետի (դասակի հրամանատարի ոգնական) նախաձեռնությամբ՝ համաձայն մշակված պլանի: Այդ գրոհը կարող է կատարվել կամ այն մոմենտին, յերբ հակառակորդը գրավում է դասակի վորևե առաջավոր կրակային կետը, քանի դեռ հակառակորդը չի կարողացել այդ կետին մոտեցնել իր գնդացիները, կամ այն մոմենտին, յերբ հակառակորդը ներս է խուժել դասակի կրակային կետերի միջանցները (արանքները):

Դասակի հրամանատարի տեղը. — վոր

տեղ պետք է լինի դասակի: Հրամանատարը հարձակողական մարտի ժամանակ: Պարզ է, վոր նա պետք է լինի այնտեղ, վորտեղից նրան հարմար է ղեկավարել դասակը և հակառակորդի գործողություններն այն շերտում, վորը նշանակված է դասակի գնդակոծման համար: Այն տեղը, վորտեղ մարտի ժամանակ գլուխում է դասակի հրամանատարը, վորտեղից ղեկավարում է դասակի գործողությունները, կոչվում է հրամանատարական կետ:

Կրակային կետի և հարվածային ջոկերի (հակադրոհի համար նշանակված ջոկերի) հետ մշտական կապը պահպանվում է գլխավորապես ազդանշաններ տրվելով: Ուստի դասակի հրամանատարն իր հրամանատարական կետը վորոշելիս պետք է նկատի ունենա այն հանգամանքը, վոր այդ կետից լավ յերևան կրակային կետերն ու հարվածային ջոկերի տեղավորմանը մոտիկ գրվող դիտողները: Ազդարարները տեղավորվում են այնպիսի տեղերում, վոր հակառակորդը չկարողանա նկատել տրվող ազդանշանները և վորպեսզի ազդաշնանները լավ յերևան այդ ազդանշաններն ընդունող դիտողներին:

Յեթե յենթադրվում է կապը պահպանել լրատարների միջոցով, այդ դեպքում առանձին ուշադրություն պետք է դարձվի դասակի հրամանատարի հրամանատարական կետի և դատակային պաշտպանության շրջանի կրակային

կետերի միջև յեղած ճանապարհների ընտրու-
թյան վրա: Իրա համար պետք է ոգտագործել
տեղանքի ամեն մի ծալք—առուները, մացա-
ռուտը, դաշտերի միջնակները, բարձր խոտը և
այլն:

Պաշտպանության ժամանակ դոյություն
ունեցող մարտակարգի խնդիրը վերջանալու
համար, մի փոքր խոսենք ճարտարադիտա-
կան աշխատանքների մասին, վոր պետք է կա-
տարել պաշտպանողական շրջանը դրավելիս:

Պաշտպանության շերտի ամրացումը.—
Հակառակորդի հարձակումը կանգ առնել տա-
լու և դրանով իրեն հակառակորդի համեմա-
տությամբ ավելի ձեռնտու պայմանների մեջ դը-
նելու համար, անհրաժեշտ է այն տեղանքը, վո-
րի վրա տեղավորված են կրակային միջոցները,
հարմարեցնել այնպես, վոր ծածկարան հանդի-
սանա հակառակորդի կրակից և դիտողությու-
նից պաշտպանվելու համար:

Իրան հասնել կարելի յե՝ տեղանքի բոլոր
ծալքերի ու տեղական առարկաների (առու-
ներ, բարձրություններ, քարե պատեր, հո-
ղաթմբեր և այլն) ոգտագործումով՝ նրանց
յետևը կամ նրա մեջ տեղավորելով կրակային
միջոցները, 2) խրամատներ, խրամուղիներ
քանդելով և արհեստական խոչընդոտներ (լա-
րափակոցներ, արգելանտառներ և այլն) կա-
ռուցելով, յեթե տեղանքը բնական ծածկարան-
ներ չունի: Տեղանքին այդ կերպ հարմարվելը

բաժնակաճանին ուժեղացնում և պաշտպանու-
թյունը: Ուստի դասակի հրամանատարը, բա-
ցի ջոկերի տեղավորման համար նրանց տեղե-
րը և նրանց վրա դրվող կրակային կամ հար-
վածածային խնդիրները ցույց տալուց, ցույց և
տալիս, թե յուրաքանչյուր ջոկ ինչ ճարտա-
բարդիտական աշխատանք պետք և կատարի,
յերբ պետք և սկսել այդ աշխատանքները և
յերբ վերջացնել: Դասակի հրամանատարը ջո-
կերին խնդիրներ և վորոշում և տալիս՝ թե
վորտեղ և ինչ լայնությամբ և խորությամբ
պետք և կոտորել անտառը կամ մացառուտը
(յեթե այդպիսին կա), վորպեսզի կարելի լի-
նի լավ տեսաչք ջան և զնդակոծում ստեղծել,
ինչ տեսակի խրամատներ կամ բներ և պահանջ-
վում փորել և ինչպես պետք և նրանց քողարկել,
հարկաչի՞ր և արդյոք պատրաստել և ինչպիսի՞
ծածկարաններ պատրաստել հակառակորդի
դեռնամերձ և դադաթնահար կրակի դեմ (հը-
րակնատներ, ծածկեր, շքարաններ), վորտե-
ղից պահեստի և կեղծ խրամատներ բանալ:

Արհեստական խոչընդոտներն իրենց քո-
ղարկմամբ հանդերձ և խրամուղիները կառու-
ցում են հրաձգային ջոկերը կա՞ հարվածա-
յին խմբից նշանակվող զորամասերը՝ սա-
կրավոր-քողարկու հրահանգիչների ղեկավա-
րությամբ, վորոնք պետք և ուղարկվեն զնդի
սակրավոր-քողարկու դասակից:

1. Ի՞նչ դեպքերում հետևակը պետք է քո-
ղարկվի:

2. Ի՞նչ նշանակութուն ունի տեղանքը
պաշտպանության համար:

3. Ի՞նչ է նշանակում պաշտպանության
չրջան:

4. Ինչպե՞ս պահպանել պաշտպանության
մեկ շրջանի կապը մյուսի հետ:

5. Ինչպե՞ս են բաշխվում ուժերն ու միջոց-
ները պաշտպանության շրջանում:

6. Ի՞նչ է նշանակում դաշունահար դըն-
դացիքներ և յե՞րբ են նրանք դործում:

7. Յե՞րբ են հրաձգային ջոկերը պաշտ-
պանության ժամանակ ոգտադործվում իբրև
կրակային ուժ:

8. Ի՞նչ պետք է անի ամենից առաջ դասա-
կի և ապա ջոկի հրամանատարը, ստանալով
մարտական խնդիրը:

9. Ինչո՞վ և ի՞նչ կերպ է կապ պահպան-
վում կրակային կետերի հետ:


10. Ի՞նչ է նշանակում կրակային կետեր:



143
143
9162 20 409.

A $\frac{I}{4177}$





ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0038937